

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/1

27 նոյեմբերի 2012թ.

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով «Պեգաս Թրավլ» ՍՊԸ գրությամբ բերված գանգատը (մուտք «ԿԱ ՊԵԿ 19.11.2012թ. թիվ 13090-12) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ գանգատի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Պեգաս Թրավլ» ՍՊԸ կողմից 2009-2011 թ.թ. շահութահարկի, սոցիալական ապահովության վճարի, եկամտահարկի 2009-2011 թ.թ. հաշվարկ-հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով 12.07.2012 թ-ին ներկայացվելու համար «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ իրավաբանական և հարկադիր գանձումների բաժնի աշխատակցի կողմից 14.11.2012 թ-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն: Վերջինիս համաձայն, արարքը համապատասխանում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Ը օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներին:

«Պեգաս Թրավլ» ՍՊԸ վերոգրյալ գրությամբ «ԿԱ պետական եկամուտների կոմիտե բերվել է գանգատ, որով ընկերությունը խնդրել է ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Ը օրենսգրքի 37-րդ հոդվածի դրույթներով վարչական տուգանք չնշանակել: Որից հետո «ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված 21.11.2012 թ-ի դիմումով «Պեգաս Թրավլ» ՍՊԸ տնօրենը բերել է միջնորդություն, որով խնդրել է, որպեսզի վերոգրյալ գրությամբ բերված գանգատը թողնվի առանց քննության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Ը օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից»:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Ը օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, գտնում է, որ «Պեգաս Թրավլ» ՍՊԸ գանգատի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» «Ը օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Ը օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, «Պեգաս Թրավլ» ՍՊԸ գանգատի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:



Հանձնաժողովի նախագահ՝

S.ԲԱՐՍԵՂՅԱՆ